Յովհաննէս Սենեքերիմի եղբայր Գրիգորի ու նրա որդի Փիլիպպէի մասին հաղորդում են Ստեփաննոս Ասողիկը եւ Վարդան պատմիչը[29]*: Գորոգուի կամ Դիզակի թագաւորութեան մասին պահպանուել են վիմագիր տուեալներ 997 եւ 1000 թուականներից (օր.՝ Տումի գիւղի մօտ Կարմիր եղցու բարաւորի վրայ. «Ի ՆԽԹ թվին Հայոց* [=1000 թ.] *եւ ի թագաւորութեանս տեառն Գագիկա, որդո Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի, շինեցի տուն Աստուծոյ ի փրկութիւն հոգւո իմո եւ ծնողաց իմոց»)*[30]*:*

Ի տարբերութիւն Փառիսոսի եւ Դիզակի՝ Խաչէնում թագաւորութեան հաստատման մասին նմանատիպ ուղղակի աղբիւրագիտական վկայութիւններ չեն պահպանուել, եւ նրա մասին մենք դատում ենք հարեւան թագաւորութիւնների հետ զուգահեռներով ու Ստեփաննոս Օրբէլեանի անուղղակի տեղեկութիւններով, որ վերաբերում են այդ թագաւորական տան խնամիական կապերին: Մասնաւորապէս, Սիւնեաց պատմիչի երկից գիտենք, որ Բաղաց թագաւոր Գրիգոր Ա-ի (1051-1072) աներն էր «Աղուանից», տուեալ դէպքում՝ Խաչէնի *թագաւոր Սեւադան՝ հայրը Շահանդուխտ Բ թագուհու*[31]*, ինչպէս նաեւ վերջինիս եղբայր, «թագաւորազն մանուկ» Սենեքերիմի, որին անժառանգ վախճանուած Գրիգորից յետոյ վստահուեց Սիւնեաց գահը (1072-1094/1096): Վահանավանքի կրկնայարկ եկեղեցու շինարարական վիմագրում իր հօր թագաւոր լինելու մասին գրում է նաեւ Շահանդուխտը. «Ի ՇԼԵ թվականիս* [=1086 թ.]. *ես՝ Շահանդուխտ, դուստր Սեւադաի Աղվանից* թագաւորի *եւ ամուսին Գրիգոր թագաւորի՝ որդո Աշոտկա, վասն ոչ գոլո մեր ի միասին ժառանգ [ը]ստ մարմնո, ես եւ քոյրս իմ Կատայս շինեցաք զՄ^ար^իամ Աստուածածինս փոխարէն գթոց նորա...»*[32]*: Վահանավանքում պահպանուել է նաեւ Գրիգորի «զոքանչ» յորջորջուած Աղուանից Սոփի թագուհու 1081 թուակիր տապանաքարը, որի բնագիրն է. «Սոփի՝ Աղվանից* թագուհի*, զոքանչ Գրիգոր թագաւորի՝ որդոյ Աշոտկայ, մայր Շահանդխտո: Թ^{ուին} :ՇԼ:* [=1081 թ.]»[33]*:*

Վերլուծելով ոչ շատ հարուստ աղբիւրագիտական նիւթը՝ պէտք է մտածել, որ Խաչէնի իշխանութեան վերաճումը թագաւորութեան, ամենայն հաւանականութեամբ, նոյնպէս տեղի է ունեցել Ժ դ. վերջերին: Դա այն դարաշրջանն էր, երբ Բագրատունեաց թագաւոր-շահնշահերն, ըստ էութեան, հաշտուել էին իրենց «Մեծ Հայքի» (այդպիսին էր երկրի պաշտօնական անուանումը[34]*) տարածքում փոքր աւատական թագաւորութիւնների ստեղծման իրողութեան հետ եւ, ապահովելով դաշնակցային հիմունքներով Անիի որոշակի գերակայութիւնը, հէնց իրենք էլ հաստատում էին նրանց արքայական լիազօրութիւնները՝ ինվեստիտուրան (աղբիւրներն ուղղակի նկարագրում են այդ հաս-*

29 **Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան** *Պատմութիւն Տիեզերական*, գիրք Գ, գլ. ԺԷ, էջ 198, գլ. ԽԸ, էջ 286. **Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ** *Պատմութիւն տիեզերական*, ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկուա, 1861, էջ 134-135:

30 *Դիւան հայ վիմագրության*, պր. V, *Արցախ*, էջ 173 (N 604), տե՛ս նաեւ էջ 169 (N 587):

31 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական*, գլ. ԾԸ, էջ 233 (բնագիրն է. «ի տանէն Աղուանից՝ դուստր նոցին *թագաւորազինն* մեծին Սեւադայի»):

32 *Դիւան հայ վիմագրության*, պր. II, կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1960, էջ 138 (N 405):

33 Տե՛ս **Գ. Մ. Գրիգորեան**, *Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից*, - ՊԲՀ, 1980, թիւ 2, էջ 162-163. նոյնի՝ *Սիւնիքի թագաւորությունը (X-XII դարեր)*, - ՊԲՀ, 2006, թիւ 6, էջ 141 (այստեղ հեղինակը շարունակում է. «Նոյն՝ 1081 թուականին, Շահանդուխտ թագուհին, «սրբասնունդ օրիորդ» Կատան՝ նրա քոյրը, եւ Սենեքերիմ եղբայրը մօր յիշատակը յաւերժացնելու նպատակով գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել մեծ տաճարի արեւելեան սարալանջին»):

34 Տե՛ս **К. Н. Юзбашян,** *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, էջ 81: